ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան *10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Սևակ Միքայելյանը, Մերի Տոնոյանը, Թեհմինե Բադալյանը, Արտեմ Ստեփանյանը, Անդրանիկ Բաբայանը, Վահրամ Մեսրոպյանը, Լուսինե Հակոբյանը, Լևոն Գրիգորյանը, Անահիտ Մարգարյանը, Արա Հարությունյանը, Գինեվան Ղազարյանը, Գևորգ Գյուրջյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գուրգեն Հակոբյան, Քրիստինե Բաղդասարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարուժան Սաֆարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 10-ի N 12 արտահերթ նիստի օրակարգը.
1) Գյուղատնտեսական, ջրային նպատակային նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասին
2) Մեկ անձից գնում կատարելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 168/

Լսեցին
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՋՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 9-րդ և 14-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն և N1920-Ն որոշումներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ 2024 թվականի սեպտեմբերի 30-ի N1/փ-387 դրական եզրակացությունը և հիմք ընդունելով «ԳՐԻՆ ՖԱՐՄԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ռոբերտ Կոծինյանի 2024 թվականի հունիսի 12-ի դիմումը.

1.Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող՝ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաք 10 հասցեում «ԳՐԻՆ ՖԱՐՄԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11062024-07-0038, գաղտնաբառ՝ YC9KSW68MYLI) գյուղատնտեսական, ջրային նպատակային նշանակության 22.2279հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ինքնակամ կառուցված ջերմոցային տնտեսության շինությունների օրինականացման նպատակով:
2.Հանձնարարել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել Հրազդան համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինության քարտեզում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 169/

Լսեցին
ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Գնումների մասին օրենքի» 23-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հրազդան համայնքի կողմից Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքից ներմուծվող 25 վերելակների խցիկների փոխադրումն իրականացնել մեկ անձից գնման ընթացակարգով :
2. «Սաֆարի Գրուպ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01258974) հետ կնքել բեռնափոխադրման ծառայությունների պայմանագիր 1560000/ մեկ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ արժեքով (ներառյալ հարկերը):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N170/

Ավագանու անդամներ՝

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՂԱՋԱՐՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Վ. ՍԱՖԱՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը _____